



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Գեղագիտության  
Ազգային  
Կենտրոն

## Հ Ր Ա Վ Ե Ր

Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնին՝

**«ԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒՄ»**

խորագրով

*«Անկախություն, անկախ Հայրենիքն,  
իրավունք լինելուց առաջ պարտականություն է ...»*

Գ.Նժդեհ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը 2021 թ. կազմակերպում է Համահայկական մանկապատանեկան նկարչական ամենամյա մրցույթ-փառատոնը՝ «Հայոց պետականություն. ինքնաճանաչում» խորագրով, որը նվիրված է մեր պետականության անցյալին ու ներկային, դրանց իմաստավորմանն ու գնահատմանը, ապագայի մեր տեսլականին:

2009 թ. սկսած ամեն տարի անց է կացվել Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոն: 2020 թ. տարեսկզբին աշխարհին տիրած համավարակի, որից Հայաստանը նույնպես անմասն ու անհետևանք չմնաց, ապա նաև տարեվերջին վրա հասած չարաբաստիկ ու Հայաստանի համար ծանրագույն հետևանքներով ավարտված Արցախյան երկրորդ պատերազմի պատճառով Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնի արդեն իսկ ձևավորված գեղեցիկ ավանդույթն ընդհատվեց:

Սակայն հետամուտ լինելով նոր սերնդի հայրենասիրական և գեղագիտական դաստիարակությանը Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ, վերականգնում է կարճատև ընդհատված ավանդույթը և 2021 թ. անցկացվելու է Համահայկական մանկապատանեկան մրցույթ-փառատոնը (պիլոտային տարբերակով) մեկ այլ՝ ավելի ժամանակակից ու նորարարական ձևաչափով. առցանց ու հեռավար:

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել 6-18 տարեկան արվեստասեր և ստեղծագործական շնորհով օժտված հայ մանուկներ և պատանիներ ամբողջ աշխարհից՝



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Գեղագիտության  
Ազգային  
Կենտրոն

այաստանի, Արցախի և սփյուռքի բոլոր տեսակի կրթօջախների սաները, ինչպես նաև պարզապես ստեղծագործող, սակայն որևէ մասնագիտական հաստատություն չհաճախող երեխաները:

2021 թ. մրցույթ-փառատոնը կիրականացվի առցանց ցուցադրության, վարպետության դասերի, սեմինարների ու հարցուպատասխանի ձևաչափով: Ստեղծագործականից բացի՝ այն այս տարի կունենա ավելի ընդգծված ուսուցողական-կրթական բնույթ:

### ***Ընթացակարգի նկարագրություն.***

Մրցույթի շրջանակում Գեղագիտության Ազգային Կենտրոնի կողմից կստեղծվեն 3-5 րոպե տևողությամբ 5-7 ուսուցողական տեսահոլովակներ, որոնց միջոցով թե կենտրոնի, և թե՛ հրավիրյալ մասնագետները հայերենով (անգլերեն և ռուսերեն ենթագրերով) կներկայացնեն այն տեխնիկաները, որոնցով աշխատելու են մրցույթի մասնակիցները:

Տեսահոլովակներ կպատրաստվեն հետևյալն տեխնիկաների վերաբերյալ.

- գեղանկարչություն
- խճանկար
- մանրանկարչություն
- լինոփորագրություն/մենատիպ
- աստղնագործություն
- կարպետագործություն
- զարդարվեստ

Կրթօջախների և գեղագիտական դաստիարակության կենտրոնների համար՝ իրենց կողմից տեսահոլովակները դիտելուց և մասնակցության հայտը գրանցելուց հետո, կմասնակցեն առցանց դասընթացներին՝ տեսահոլովակներ պատրաստած նույն մասնագետների մասնակցությամբ:

Դրանից հետո հայտատու դպրոցները ինքնուրույն աշխատանք կտանեն թեմայի շուրջ և ընտրված տեխնիկայով աշխատանքներ ներկայացնելու համար:

Ներկայացված լավագույն աշխատանքները կցուցադրվեն հատուկ հոլովակի միջոցով, իսկ մասնակիցները (կրթօջախները/ԳԴԿ-ները և սաները) կստանան վկայականներ մասնակցելու վերաբերյալ:

Բոլոր տեսահոլովակները և առցանց հայտի հղումը մինչև 2021 թ. ապրիլ ամիսը տեղադրվելու է Գեղագիտության ազգային կենտրոնի պաշտոնական կայքում՝ [www.nca.am](http://www.nca.am)



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Գեղագիտության  
Ազգային  
Կենտրոն

### **Ժամկետներ.**

Առցանց դասընթացներին և մրցույթին մասնակցելու հայտերն ընդունվում են 2021 թ. մայիսի 1-ից սեպտեմբերի 15-ը:

Դասընթացների սկիզբը՝ 2021 թ. սեպտեմբերի 15-ից:

Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ՝ 2021 թ. նոյեմբերի 1-ը:

Ամփոփիչ առցանց ցուցադրություն՝ 2021 թ. նոյեմբեր:

### **Ամփոփ ուղեցույց.**

<b>Գործողություններ</b>		<b>Ժամկետ</b>
<b>Կազմակերպիչներ</b>	<b>Մասնակիցներ</b>	
Առցանց հայտաձևի տեղադրում կայքում		մինչև 01.04
Հոլովակների պատաստում		մինչև 01.06
	Հայտերի ներկայացում	01.05-15.09
Դասընթացների ժամանակացույցի կազմում		ընթացիկ
	Հոլովակների դիտում	ընթացիկ
Դասընթացների անցկացում		01.09-15.10
	Աշխատանքների ներկայացում	մինչև 01.11
Աշխատանքների գնահատում		նոյեմբեր
Հոլովակի պատրաստում		
Ամփոփում, պարգևատրում		

Հավելյալ հարցերով կարելի է դիմել.

#### **ՀՀ ԿԳՄՍ նախարարություն.**

հեռ. +374 10 599-647

Էլ.փոստ. [spyurg@yahoo.com](mailto:spyurg@yahoo.com)

Կայքէջ. [www.escs.am](http://www.escs.am)

Էջ Facebook-ում. «Սփյուռքի բաժին ՀՀ ԿԳՄՍՆ»

#### **Գեղագիտության ազգային կենտրոն.**

հեռ. 060 83-33-83

Էլ.փոստ. [nkarchakan@gmail.com](mailto:nkarchakan@gmail.com)

Կայքէջ. [www.nca.am](http://www.nca.am)

Էջ Facebook-ում. «National Center of Aesthetics»